ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը
   Լուսինե Այվազյան
   ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության պետական բյուջեի հաշվառման բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.
   ք.Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն
   2025թ. մարտի 24-ից 28-ը

3. Հրավիրող կողմը.
   Համաշխարհային բանկ, PEMPAL ծրագրի քարտուղարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
   Հանրային ծախսերի կառավարման գործընկերային ուսուցման ցանցի (PEMPAL) կողմից կազմակերպվող PEMPAL ծրագրի ողջ ցանցի լիագումար նիստին մասնակցելու նպատակով

5. Քննարկված թեմաները
   - Գանձապետարանի դերի և գործառույթների էվոլյուցիան,
   - Թվային տրանսֆորմացիաների ազդեցությունը գանձապետարանի դերի վրա,
   - Թվային գործիքների կիրառումը՝ ուղղված ռիսկերի նվազեցմանը և նոր հնարավորությունների ստեղծմանը,
   - Պետական ֆինանսների կառավարում,
   - Ռազմավարության պլանավորման և բյուջետավորման արդյունավետ փոխկապակցումը,
   - «Կանաչ բյուջե»,
   - Ներքին աուդիտ,
   - PEMPAL ծրագրի ապագա՝ 2026-2030թթ գործունեությունը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.
   Մասնակցում էին PEMPAL ծրագրի մասնակից երկրների, ինչպես նաև Համաշխարհային բանկի ընդհանուր թվով՝ 200 ներկայացուցիչներ:

   Քննարկված հարցերի շրջանակը հիմնականում առնչվում էր PEMPAL ծրագրի ապագա՝ 2026-2030թթ գործունեությանը, գանձապետարանի դերին և գործառույթներին,

թվային գործիքների կիրառմանը, պետական ֆինանսների կառավարմանը, ռազմավարության պլանավորման և բյուջետավորման փոխկապակցման արդյունավետությանը, ներքին աուդիտին, ինչպես նաև որոշ երկրներում արդեն մշակված «Կանաչ բյուջեի» առանձնահատկություններին:

Ելույթ ունեցան Եվրահանձնաժողովի, Համաշխարհային բանկի, PEMPAL ծրագիրը համակարգող կոմիտեի, ինչպես նաև մասնակից երկրների ֆինանսների նախարարության ներկայացուցիչներ և փորձագետներ:

Յուրաքանչյուր թեմայի ներկայացումից հետո հարցեր տալու հնարավորություն էր ընձեռվում և արդյունքում կազմակերպվում էին կարճ քննարկումներ:

Կազմակերպվել են նաև փոքր խմբերով քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվել են մասնակից երկրների գանձապետական համակարգերի առաձնահատկությունները և առկա խնդիրները:

7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ժամանակ փաստաթուղթ չի ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կարևորել PEMPAL ծրագրի հետագա՝ 2026-2030թթ գործունեությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

02.04.2025թ.